ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1417-Ա

«02» դեկտեմբերի 2022 թ.

«ԵՔ-ՀՍԿԾՄ-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի մայիսի 26-ի հ.240-Ա որոշումը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայության կողմից ներկայացված Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական շենքի ճաշարանում հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման նպատակով առաջարկների հարցման հայտը.

1.Ձևավորել «ԵՔ-ՀՍԿԾՄ-22/1» ծածկագրով առաջարկների հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Ս. Մկրտումյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Ա. Մկրտչյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայության պետ
Ա. Ավետիսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայության առաջատար մասնագետ
Ք. Լազարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

2. Առաջարկների հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ապրանքների գնումների պետ Ա.Համբարձումյանին:

3. Սահմանել, որ առաջարկների հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը տեղի կունենա սույն կարգադրությունն ուժի մեջ մտնելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ. 1, հ. 310 սենյակ):

4. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության և մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայության պետերի վրա:

5. Սույն գործընթացի շրջանակներում պայմանագրի կնքման լիազորությունները վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին:

6.Կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

12/2/2022

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ